ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1894—1896 ԹԹ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո՝ 1878 թ. փետրվարի 19-ին, Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագրով ընդունվում է Հայկական հարցի վերաբերյալ 16-րդ հոդվածը, որը, սակայն, վերանայվում է Բեռլինի համաժողովում (1878 թ. հունիս-հուլիս) և դառնում 61-րդ հոդված։ Ըստ այդ հոդվածի, Բ. դուռը պարտավորվում է մասնակի բարեփոխումներ կատարել Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում։ Այդ բարենորոգումների ընթացքը պիտի վերահսկեին մեծ տերությունները։ Սակայն Օսմանյան կայսրությունը ոչ թե բարելավում, այլ որոշ ժամանակ անց ավելի է վատթարացնում հայ բնակչության վիճակը։ Շարունակվում է օսմանյան ավանդական հայահալած քաղաքականությունը՝ նպատակ ունենալով հայությանը դուրս մղել իր բնօրրանից։ Գործադրվող անօրինականություններն ու կամայականությունները լցնում են համբերության բաժակը. Արևմտյան Հայաստանի առանձին շրջաններում հայերը զենքի են դիմում՝ պաշտպանելու իրենց ինչքը, պատիվը, մարդկային իրավունքները։ Ի պատասխան հետևում են թուրքական կառավարության կազմակերպած 1894—1896 թթ. հայության զանգվածային ջարդերը։

Ստորև հրապարակվող փաստաթղթերը տարբեր վայրերի հայկական համայնքների ու նրանց ներկայացուցիչների ցասումնալից բողոքներն են՝ որպես արձագանք կատարված այդ ոճրագործություններին։

Փաստաթղթերը հրապարակվում են առաջին անգամ։ Դրանք պահվում են ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվի տարբեր ֆոնդերում։

Ջ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

№ 1

Գանձակի հայ հասարակության խնդրագիր Խրիմյան կաթողիկոսին՝ Արևմտյան Հայաստանի բնակչության ծանր վիճակի և օգնության հարցով Ռուսաստանին ու մեծ տերություններին դիմելու մասին

1 դեկտեմբերի 1894 թ.
Գանձակ

Ցավում ենք, որ կրկին անգամ ստիպված ենք մեր հանրագրով ձանձրություն պատճառել քեզ և մեր ուղարկած պատգամավորի՝ քեզ հետ ունեցած մի ժամուց խոսակցությունով խլել քեզանից այն թանկագին ժամանակը, որը միայն հայ ժողովրդի բարօրության ու ապագա կյանքի համար է որոշված։ Բայց ներկա հանգամանքներում լռելը մահացու մեղք համարելով՝ միացնում ենք մեր ձայնն ևս համայն հայ ժողովրդի ցանկության ու ձգտումների հետ։

Տաճկաստանում ապրող հայ ժողովրդի մեծամասնությունը այսօր տաճկական բիրտ քաղաքականության զոհ է գնում։ Այն երկիրը, որ հայ ժողովրդի հայրենիք անունն է կրում, այսօր կամաց-կամաց դատարկվում է յուր բուն ժողովրդից և նրա փոխարեն լցվում օտար ու խորթ ցեղերով։ Այս տխուր իրողությունների մանրամասնությունները քեզ, Հայրի՛կ, ավելի մոտիկից են հայտնի, ուստի և դորա վերա չկամենալով կանգնել, մենք միայն այսքանը կասենք, որ Տաճկաստանի բռնած դիրքը հայ ժողովրդի վերաբերմամբ այնքան վտանգավոր կերպարանք է ընդունել, որ սաստկում է ոչընչացնել այդ տոկուն ու աշխատասեր տարրը։

Մենք տաճկական նույնպիսի վերաբերմունք գիտենք շատ մոտ անց-

յալում այն քրիստոնյա մանր ցեղերի նկատմամբ, որոնք, սակայն, վայելելով մի ժամանակ Ռուսիո քրիստոնյա հզոր պետության պաշտպանությունը, այսօր ինքնուրույն և ազատ իշխանություններ են ներկայացնում։ Պատմությունը, և այն այնքան մոտ ժամանակի պատմությունը, այսօր մեզ խրախուսում է չհուսահատվել, չընկճվել առօրյա դեպքերի ազդեցության տակ, այլ ընդհակառակը, քաջալերված եվրոպական պետությունների ցույց տված այն մարդասեր վարմունքով, որ նրանք ունեցան մեր վերաբերմամբ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով և Ռուսիո՝ Սան-Ստեֆանոյում կռած դաշնադրի 16-րդ հոդվածով, այսօր մենք վստահանում ենք մտածել, որ նույն եվրոպական պետությունները պատրաստ են օգնել իրենց քրիստոնյա եղբայրակցին, եթե վերջինս կբարձրացնե յուր ձայնը խնդրելու այդպիսի մի պաշտպանություն։

Այժմ, Հայրի՛կ, աչքի առաջ ունենալով, որ անպաշտպան հայ ժողովրդի հոգևոր պետի վերա է ծանրանում նրա ապագայի, նրա բարօրության պատասխանատվությունը, և մանավանդ նրա հոգևոր պետն է կազմում միակ ղորավոր ձայնը, մենք դիմում ենք քեզ որդիական աղերսանքով խնդրելու, որ դու բարձրացնես քո ձայնը՝ դիմելով Ռուսիո և եվրոպական այլ պետություններին և հիշեցնելով նրանց տաճկական խոստումները՝ հայաբնակ գավառներում փոքր ի շատե բարեփոխված կառավարություն մտցնելու, խընդրես նրանց պաշտպանությունը։

Գանձակ քաղաքի, ինչպես նաև Ռուսիո պետության տակ գտնված ամբողջ հայ համայնքը, այնքան վստահություն ունի իրեն սիրած կայսեր և եվրոպական մարդասեր պետերի վերա, որ սույնպիսի մի խնդրով դիմում է քեզ՝ հանդիսանալու հայ ժողովրդի բերան և աղաչավոր խոսք ամբողջ լուսավոր աշխարհի առաջ, տաճկահայ ժողովրդի ներկա օրերում ունեցած ճզնաժամի միջոցին*։

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 1—3։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 2

Բուլղարահայ գաղթականության ներկայացուցիչների խնդրագիրը կաթողիկոսին՝ արևմտահայերին օգնելու նպատակով ռուսաց կայսրին դիմելու մասին

21 դեկտեմբերի 1894 թ.
Բալչիք**

Ամենայն ակնածությամբ և խոնարհությամբ Ձեր վեհափառության ներկայացնենք (ինչպես արդեն Ձեզ ծանոթ) Հայաստանի ներկա ամենասոսկալի և ամենախղճալի վիճակը։ Տեղվույս հայ գաղթականությունը բոլորվին սպացված XIX լուսաչորյալ դարուս մեջ, մանավանդ այս վերջին Սասնո ավերակ և անապատ վիճակեն, որ 3000-ին ավելի մեր արյունակից եղբարց մահը սուրով համակեց մեզ բարբարոսաց կողմե։ 4-րդ զորաբանակի հրամանատար, դաշանաբարո Ձերի փաշայի և յուր համիդիեի հետևալաղուց, հետևակաղորաց, բաշիբոզուկաց օգնությամբ բոլորովին փչացուց, ոմբակոծեց Սասունը, յուր դեղեցիկ 30 գյուղերով և ամենասոսկալի տանջանաց ենթարկեցին բոլորովին, ինչպես շատ կողմերը Հայաստանի։ Վեհափառ տե՛ր, ալ հայությունը Տաճկահայաստանի մեջ այս ընթացքով բոլորովին պիտի փչանա, եթե անմիջական օգնություն մը չըլլա։ Այդ օգնությունն ալ ընդհանուր հայությունը Ձեր վեհափառութենեն կսպասե, որ իրավամբ կ'կոչինը միշտ Ձեր վեհափառության Վասպուրականի արծիվն և Հայաստանի հրեշտակն և Ձեր միջնորդության կսպասենք, քրիստոնեից պաշտպան,

* Հետևում է 268 ստորագրություն։
** Քաղաք Բուլղարիայում, Սև ծովի ափին։

տզզաց ազատարար և մեր ամենասիրեցյալ Հոր՝ վեհափառ Նիկոլայ Բ կայսրը Ռուսիո, արտասվոք դիմելով, ներկայացնել Տաճկահայաստանի ամենաթշվառ վիճակը։ Ն[որին] վեհափառության յուր հայրական գութը շարժելով, յուր ոտքը իյնալով և յուր բարձր հովանավորությունը շնորհելով՝ ազատություն պարգևե թշվառ, խեղճուկ հայ, դարերե ի վեր տառապյալ ազգին։

Անհամբեր սպասելով Ձեր վեհափառության ի ճամրորդության լուրը ի Ս. Պետերբուրգ, որ ընդհանուր հայության բաղձանքն է։

Հայ գաղթականությունս ի սրտե կմաղթե Ձեր վեհափառության ժամերը տարիներու փոխելու, որ թանկագին է։

Մատչելով ի համբույր ամենայն ակնածությամբ սրբազնակատար աջույդ։

*Ի դիմաց հայ գաղթականութեան Բալչըքի (...)**։

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 12—13։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 3

Բելգիայի հայ հասարակության ներկայացուցիչների խնդրագիրը կաթողիկոսին՝ արևմտահայերին թրքական հարստահարություններից փրկելու համար Նիկոլայ II-ին դիմելու մասին

30 դեկտեմբերի 1894 թ.
Անվերս

Հայաստանի Տարնո գավառին մեջ վայրագ քրդաց և կանոնավոր զորաց ձեռոք եղած նտորածներեն հետզհետե եկած սոսկալի լուրերը ինչպես ի սփյուռս աշխարհի եղած հայերը, նույնպես և մեզ՝ բելգիաբնակ հայերս խոր սգո ե թախծության մեջ ձգեց։ Երբ ամբողջ Եվրոպա և Ամերիկա արդար զայրույթով լեցված են թյուրք կառավարության հանդեպ իր ձեռոք դարուս քաղաքակրթության դեմ եղած այս անարգանքին համար, մենք չենք կարող լուռ և անտարբեր կենալ։

Ձեր վեհափառության արդեն ծանոթ է վերջին տասնյակ տարիներու մեջ եղած հարստահարությունները թյուրք կառավարության թույլտվությամբ և ձեռամբ, մանավանդ Ձեր վեհափառության ծննդավայրը եղող Վասպուրականի գավառին մեջ, ուր անմեղ հոտերու հովվությունը Բահրի փաշայի պես գիշատիչ գազաններու հանձնվելը և իրենց պետին արժանի անունը կրող համիդիե կոչված ավազակախումբերու վայրագ շահատակությունները, որք կը միտին ի սպառ սպուռ ջնջել հայ տարրը Հայաստանի մեջ, եթե այլևս լուռ մնամք և բոլոր կարելի եղածը չընեմք, անշուշտ յուր նպատակին պիտի հասնի։

Արդ, Ձեր վեհափառության ազդու միջամտությունը կը խնդրեմք նորին վեհափառության Նիկոլայ Բ մեծազոր կայսեր քով՝ գինու զորությամբ միջամտելու և փրկելու զմեզ այս գիշատիչ գազաններեն, ինչպես որ նորին վեհափառության երջանկահիշատակ նախահարք ռուսաց համակրելի և սիրելի ազգին արյամբը փրկեցին հունաց, սերբաց, ռումանաց, բուլղարաց և [այլ]ն և [այլ]ն ազգերը այս ճիվաղներեն։ Ապահով եմք, որ հայ ազգը այս ամեն ազգերեն ավելի հավատարիմ և երախտապարտ պիտի մնա ռուսաո հզոր տերությանն և ազգին և չպիտի վարանի երբեք ամեն անգամ ի հարկին յուր կյանքը և արյունը խնայել, ինչպես շատ անգամներ փորձը տված է։

*Ընդունեցեք, վեհափառ տե՛ր, մեր որդիական սիրո խորին հավաստիքը***։

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 11։ Բնագիր։ Ձեռագիր։

---

* *Հետևում է 19 ստորագրություն։*

** *Հետևում է 9 ստորագրություն։*

№ 4

Մուշի վանական առաջնորդի փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանի գրությունը կաթողիկոսին՝ Սասունի աղետյալ բնակչության նյութապես օգնելու համար շնորհակալություն հայտնելու մասին

12 օգոստոսի 1895 թ.
Մուշ

Հանուն Սասնո արկածյալ և սովատանջ կարոտելոց Ձեր ս. օծության շնորհած և ուղարկած 500 (հինգ հարյուր) թղթադրամ ռուբլին հայրապետական նպաստն ամբողջովին հասավ առ նվաստությունս Հ.Յ.Դ. Կարսի կոմիտեի ներկայացուցիչ Ս. Արամյանի և նորա գործակցաց միջոցավ և պիտի գործածվի ուրիշ տեղերե ղրկված և հետզհետե ղրկվելիք նպաստից հետ վատաբախտ և զուրկ սասունցիներու այրված ու քանդված տուներու շինության, երկրագործական կենդանյաց, սերմի և գործիքներու և հանդերձեղինաց գնման, կարոտելոց ներկայիս և առաջիկային սնունդի և վերջապես անոնց բազմազան պետքերու հայթայթման։

Ի դիմաց հիշյալ տարաբախտ և ամենակարոտ ժողովրդյան կը փութամ ամենախոնարհաբար դնել հոտս հայրապետական գահույից Ձերդ ս. օծության նոցա և իմ որդիական երախտագիտության և հպատակական անտխեղծ զգացմանց հավաստիքներս և հայցել Ձեր վեհափառության բարձր հովանին և գթության ու կարեկցության ակնարկության կարգին պաշտպանությունն։

Ցարդ հասած նպաստներն բոլորովին անբավական են սասունորիներու անթիվ կարոտությանց ու պետքերու ահագին մեծության հանդեպ։ Ձմեռվան ամենախիստ եղանակը չեկած հասած, այդ դժբախտ արարածներն իրենց բնակավայրերու մեջ վերահաստատել և անոնց ամենաանհրաժեշտ պետքերն հոգալ եարենալու համար տակավին մեծաքանակ նպաստներ պետք են։ Ուրեմն, հայր ա[ստվա]ծարյալ, շնորհ ըրեք, գթացե՛ք նորանոր ռումարներով սփոփել ու մխիթարել Ձեր Սասնո ամենաթշվառ, ռազմակարոտ և հյու հոտը։

Կհամառձակիմ Ձեր վեհափառության համակրանքն ու վստահությունն հայցել պ. Ս. Արամյանի և նորա անձնվեր գործակիցներու՝ Թաթուլի, Ջալլադի և Ագրայելի, Ձեր հավատարիմ և ամենախոնարհ ծառայից վրա, որք առիթ տված են իրենց գործունեությենեն և աշխատակցություններեն գոհ մնալու։

Մատուցյալ որդիական ամենախոնարհ հարգանոք ի համբույր ա[ստվա]ծարյալ և սրբազնասուրբ աջույն և ս. դարշապարաց Ձեր ս. օծության։

Մնամ ամենախոնարհ ծառա և որդի՝ փոխանորդ ընդհ. վան. առաջնորդի և նա[խա]գահ Սասնո կարոտելոց մասնաժողովի Մշո՝

Վարդան (վ[ար]դ Հակոբյան

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 31—32։ Բնագիր։ Ձեռագիր։

Телеграмма священнослужителя Аршака в редакцию газеты «Ардзаганк» о резне армян в Турции

2 ноября 1895 г.
г. Эрзерум

Сообщаю содержание официального донесения святейшему Эрзерума.

18 октября произведена страшная резня турецкими войсками, чернью. Груда развалин, глубокий траур. Правительство напустило па несчастных армян солдат и чернь, кои совершили беспримерные

жестокости: перерезали тысячи, жгли, насиловали женщин, девиц, разграбили все магазины, опустошили, разрушили множество домов. Зверства перенесены в деревни, много убитых. Все разграблено, ужаснейшее насилие. Селения на равнине беспощадно предаются огню. Жители лишены имущества, крова, пищи, одежды; жертвы голода, непогоды.

Нсоткуда [ждать] надежды. Нет слов передать весь ужас положения. Народ [на] краю гибели. О помощи взывают тысячи страждущих, взывает о помощи убитый горем несчастный пастырь их.

Сообщите агентству.

Аршак

Ф. 56, оп. 14, д. 46, л. 36. Отпуск.

№ 6

Ղևոնդ եպիսկոպոսի հեռագիրը կաթողիկոսին՝ կոտորածից մազապուրծ ժողովրդին օգնելու մասին

2 նոյեմբերի 1895 թ.
Կարս

Անհամբերությամբ սպասում ենք Ձեր օգնությանը։ Ժողովրդի կենդանի մնացած մասը ոչնչանում է քաղցից, որ հետևանք է զարհուրելի կոտորածի և ընդհանուր հափշտակության։ Անհապաղ օգնություն, ի սեր ա[ստծո]։

Ղևոնդ եպիսկոպոս

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 39։ Պատճեն։ Ձեռագիր։

№ 7

Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային թեմական առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի դիմումը Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը՝ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերին նյութական օգնություն ցույց տալու մասին

3 նոյեմբերի 1895 թ.
Թիֆլիս

Ի հաւաստի աղբիւրաց տեղեկացայ զի ի մօտ աւուրս գաղթեալ են ի Տաճկահայոց ավելի քան զչորս հարիւր անձինս ըստ մեծի մասին կանայք և մանկտիք մերկք, քաղցեալ և իսպառ զուրկք յամենայն միջոցաց ապրուստի, որոց հարկ է անյապաղ հասուցանել զօգնութիւն, զի մի սովամահ լիցին և զրաւեսցին ի կենաց։

Ծանուցեալ զայսմ աղէտից վարչութեան բարեգործական ընկերութեանդ, խնդրեմ առանց ժամավաճառ լինելոյ հասուցանել ի միջոցաց իւրոց ի ձեռն մասնաճիւղի իւրոյ՝ որ ի Բաթում, թշուառ գաղթական ազգայնոց մերոց զդրամական նպաստս առ ի պահել զնոսա աւուրս ինչ մինչ ըստ կարգադրութեան իմոյ ի ձեռն քահանայից քաղաքիս ժողովեսցին եկեղեցիս ի բարեպաշտ ժողովրդոց կամաւոր նուէրք յօգուտ նոցա. և նմին զարարեալ կարգադրութիւնէ իւրմէ յայտնել ինձ, յաւելով ի գիտութիւն վարչութեանդ, թէ յետ ժողովման նուիրաց ունիմ գարձուցանել զփոխագարձաբար ծախեալ դրամս ընկերութեան։

Թեմական առաջնորդ՝ Գևորգ եպիս. Սուրէնեանց

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 40։ Պատճեն։ Ձեռագիր։

№ 8

Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանի գրությունը կաթողիկոսին՝ Թուրքիայում հայկական ջարդերի և տուժածներին օգնելու մասին

4 նոյեմբերի 1895 թ.
[Պոլիս]

Վեհափառ սուրբ հայրապետ,

Շնորհ ունեցա ընդունելու Ձեր վեհափառության ինքնագիր հրեք օրհնառաք գրերն՝ նախորդ հոկտեմբեր ամսույն մեջ գրված, ինչպես որ ստացա նաև նույն ամսո 30-ին Ձեր վեհափառության ուղղած հեռագիրն, որու փութացած եմ անմիջապես պատասխանել հեռագրով։

Նախորդ թղթովս, որ ի 26 հոկտեմբերի, հաղորդեցի արդեն Ձեր վեհափառության քանի մը հակիրճ տեղեկություններ Թուրքիո հայ ժողովրդյան արդի աղետալի վիճակին վրա։ Այսօր ևս կարեվեր սրտով կը հաստատեմ, թե աղետն սաստկագույն արագությամբ կընդհանրանա այլևս և կոտորածն ավարառություններով և հրաձգություններով հանդերձ կը կատարե իր ահռելի ու մոլեգին արշավն գրեթե ընդհանուր հայաբնակ գավառաց մեջ, մեկ ծայրեն մյուսն և, ափսո՜ս, ճիշտ այն միջոցին, երբ բարենորոգումներ կը հռչակվին, որք կսկսին կոտորածովք և հայոց անէացմամբ։

Ժամանակե մ՚ ի վեր սկսած էին արդեն գավառներու մեջ տեղական իշխանությանց կողմե խուզարկվիլ հայոց տունն ու տեղն և կը կապտվեին անոնց ձեռքեն ամեն ինչ, որ մինչև հացի դանակն կրնային ծառայել անոնց ինքնապաշտպանության. կը լսվեին իսլամաց բերնեն սպառնալիքներ նոր սասուններ ստեղծելու և կտեսնվեին պատրաստություններ ասոնք գործադրելու։ Եվ այս քստմնելի խորհուրդն է, որ ի գլուխ կը տարվի այսօր առաջի քրիստոնյա պետությանց Եվրոպայի, որք ըստ երևույթին, եթե բոլորովին անտարբեր չեն մնար, գեթ կտրուկ միջոց մը ձեռք չեն առնուր արյունհեղությունններն արգելելու համար։

Այս կոտորածոց իբր պատրվակ կը հռչակվի, թե հայեր տեղի կուտան անոնց. մինչդեռ մեզ հասած աղեխարշ տեղեկություններ կըսեն, թէ ոչ իմիք թշվառ հայերն չեն եղած պատճառ և ինչպես իրենց վրա համարձակեին հրավիրել այդ աղետն՝ իրենք, որք անզեն են և անպաշտպան, իրենք, որ հայտնապես տեսնելով այդ վտանգն անդուլ, անդադար կը թախանձեին անոր առաջքն առնուլ, դիմելով մինչև իսկ տեղական իշխանությանց և եվրոպական հյուպատոսներու, ուր ուրեք որ կային գավառաց մեջ։ Ահավասիկ, այսպիսի պատրվակի մը ներքև եվրոպական պետությանց համր ընթացքեն քաջալերյալ, հռչակելով ամենուրեք ստություններ, դրդելով սպառազեն խուժանն ամենայն համարձակությամբ կը կոտորեն հայ ժողովուրդն։ Հայաստանն ամբողջ, վեհափառ տեր, սպանդարան է դարձած, ո՜չ քաղաքացիին, ո՜չ շինականին, ո՜չ կնոջ և ո՜չ մանկան կը խնայվի։

Կոտորածներ տեղի ունեցած են ի Տրապիզոն սեպտեմբեր 26-ին, Ակհիսար Նիկոմեդիո՝ 27-ին, ի Հասան-Օվա՝ 30-ին, ի Բաբերդ՝ դարձյալ 30-ին, Անտիոք և ի Չմշկածագ՝ նույն ամսո մեջ, ի Շապին-Գարահիսար և Ախլաթ հոկտեմբերի սկզբներին. ի Դերջան՝ հոկտեմբեր 7-ին, հԱկն՝ 8-ին, հԵրզնկա և Քեմախ՝ 9-ին, ի Տիվրիկ և ի Զարսանճակ՝ նույն ամսո մեջ, ի Հաճն՝ 21-ին, հԱլպիսթան՝ նույն ամսո մեջ. ի Մարաշ՝ 25-ին, ի Խարբերդ՝ 28-ին և ի գյուղորայս Սեբաստիո ու Արաբկիրի՝ նույն ամսո վերջերն։ Ասոնցմե զատ Ամասիա, Ադանա, Սղերդ, Այնթապ, Մուշ, Վան, Բայազետ, Եվդոկիա, Օրդու, Սամսոն, Պաֆրա և ուրիշ շատ կողմեր ենթակա են ժամե ժամ կոտորածի արհավրաց։

Կը կողոպտվին շուկաներն, ավարի կը տրվին գյուղացիներու ձմռան համար մթերած պաշարն, որով կոտորածե ողջ մնացողներն պիտի մեռնին անոթութենե։ Ամեն կողմե աղաղակ մը կը բարձրանա, օրհասականներու աղաղակ, զիրենք ազատելու կոտորածե և սովալլուկ մահվանե։

Չգիտենք, վեհափառ տեր, որո՞ւ դիմել, չգիտենք ի՞նչ միջոց փորձել այլևս այս արյունհեղությանց առաջքն առնելու, անոնց վերադարձն արգելելու և անոթի ու անպատսպար մնացողներս պահպանելու համար։ Փութացի աղերսել կրկին և կրկին եվրոպական պետությանց դեսպաններուն, որ միջամտեն ու արգիլեն կոտորածն, որ քաղքե քաղաք, գյուղե գյուղ կը վազե արյան գետերու վրայե։ Հոկտեմբեր 24-ի երեքշաբթի օր հազիվ բոլոր դեսպանք զատ-զատ դիմելով ի Բ. դուռն կը հայտարարեն, որ միջոցներ գործ դրվին անոնց առաջքն առնելու համար, եթե ոչ իրենք պիտի խորհին միջոցներն, սակայն արդյունքը չերևիր դեռ։ Այս տեղեկություններես հասու կը լինի Ձեր վեհափառությունը, թե այս անգամու վտանգը սոսկալի է և համայնակուլ։ Ուստի կաղերսեմ Ձեր վեհափառության, առանց ժամ ու վայրկյան կորսնցնելու ի թիկունս հասանել մեզ, ընել ինչ որ կրնաք, դիմել որու որ կարելի է և ի մասնավորի ամենազորամած ցարին՝ ամենայն ռուսաց, որպեսզի միջամտություն մ'ըլլա ազդու կերպով ու այս արյունահեղությանց առաջքն առնվի ու կրկնությունն արգելվի։

Ներփակյալ կուղարկեմ Ձեր վեհափառության կոտորածոց մասին Տրապիզոնեն, Կարինեն, Բաղեշեն, Երզնկայեն եկած գրություններն և պիտի շարունակեմք ուղարկել հետզհետե, երբ մյուսներ հասնեն առ մեզ։ Կսպասեմք, վեհափառ տեր, Ձեր պատասխանվույն։

Մնամ կարոտ աղոթից սրբո օծությանդ՝
Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյան

Հ. գ.

Կը կրկնեմ նաև, վեհափառ տեր, և թախանձագին կը խնդրեմ, որ միջոցներ ձեռք առնվին Ձեր վեհափառության կողմե, մեծաքանակ օգնության գումարներ հասցնելու համար սովելոց, զի այլևս 5—10 հազար ռուբլիի գումարներ չեն բավեր և այս առթիվ անօգուտ չեմ համարեր հայտնել, թե պատրիարքարանես ոևէ լրագրի տեղեկություն չէ տրված մեզ հասած նախորդ նպաստի գումարին վրա, այլ ուրիշ աղբյուրե պետք է հաղորդված լինի այն։

Ֆ. 56, ց. 16, գ. 156, թ. 3—4։ Պատճեն։ Ձեռագիր։

№ 9

Սարգիս Շաթիրյանի դիմումը կաթողիկոսին՝ Արևմտյան Հայաստանից Բաթում գաղթած հայությանը օգնություն ցույց տալու մասին

16 նոյեմբերի 1895 թ.
Բաթում

Վեհափառ տե՛ր

Ի ներքո ստորագրյալ Ձերդ սուրբ օծության ամենախոնարհ ծառա Սարգիս Շաթիրյան, երեցփոխ Բաթումի եկեղեցվույն, ամբողջ ծխականների կողմից համարձակվում եմ մատուցել ի համբույր սուրբ աջույդ և անել հետևյալ խոնարհ խնդիրը։

Տրապիզոնից, ուրիշ ծովափնյա և ծովի մոտ եղող տեղերից այժմ խմբերով քաղաքս գալիս են բազմաթիվ գաղթականներ, որոնցից շատերը իրանց աշխատող այր անդամներից հավիտենապես զրկված են։ Թշվառությունը աննկարագրելի է, երեկվա բարեկեցիկ ընտանիքը այսօր մի կտոր չոր հացի կարոտ է, կիսամերկ այրիներ իրանց վիրավոր զավակների հետ ապաստարանի և խնամքի են կարոտ։ Դրանք բոլորն էլ դիմում են իբր երեցփոխի ինձ և օգնություն խնդրում։ Ես էլ անկարող լինելով աղքատիկ եկեղեցվույս արդյունքներից նրանց բաժին հանել, ստիպված եմ դիմելու բարեպաշտ ծխականց օգնության։ Այս արտասովալի տեսարանին առաջ մեր եկեղեցվո ծխականները ընդունելով իմ խնդիրը, իրանց սրբազան պարտքն

են համարում օգնել յուրյանց թշվառ քույրերին, բայց Բաթումի պես մի փոքր քաղաք պետք եղած օգնությունը կարենալ հասցնելու համար ստիպված է դիմել ուրիշ տեղերի հայերի օժանդակության։ Մենք այս մասին պետք եղած կառավարական արտոնությունը ձեռք բերելու համար տեղվույս քահանայի և գործակալ արժանապատիվ Տեր Դավիթ Սրալյանի ընկերակցությամբ դիմեցինք Քութայիս նորին գերազանցություն պարոն նահանգապետին, որը յուր իրավասությունից բարձր նկատելով այդ արտոնություն տալը, խորհուրդ տվեց դիմել սրբազան թեմական առաջնորդին և կամ ուղղակի Ձերդ վեհափառության։ Մենք այս բոլորը տեղեկագրյալ ենք թեմական առաջնորդին։

Այժմ խոնարհաբար խնդրում ենք Ձեր բարձր վեհափառությունից, որ հաճիք պատշաճ տնօրինությունները անել ձեռք բերելու համար ցանկալի արտոնությունը, որպեսզի կարողանանք մի հանձնաժողով կազմել և հանգանակություն անել հօգուտ այս թշվառ գաղթականների և փրկել հարյուրավոր կյանքեր ցրտահար և սովամահ լինելու ակներև և անխուսափելի վտանգից։

Վստահ Ձերդ վեհափառության հայրական գթույն և հոգածության, որով մեր սույն խնդիրը ի կատար պիտի անեք, խորին երախտագիտությամբ և որդիական ակնածությամբ հանուն ծխական ամբողջ ժողովրդյան կը մատչիմ ի համբույր սուրբ օծությանդ հայրապետական աջույն։

Ձեր ամենաբարձր վեհափառության ամենախոնարհ և
ամենատաղանդ որդի
ՍԱՐԳԻՍ ՇԱԹԻՐՅԱՆ

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 46։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 10

Արևմտահայ գաղթականների խնդրագիրը Կաթողիկոսին՝ արևմտահայերին օգնելու նպատակով քրիստոնյա պետություններին դիմելու մասին

1895 թ.

Մեր հայրենիքը կրակի ու բոցի մեջ է այսօր։ Տաճիկ տերությունը որոշած է դատարկել Հայաստանը։ Նա դիմում է ամեն տեսակ սարսափեցնող միջոցների, որպեսզի գաղթեցնի հայերին իրանց ծննդավայրից։ Ճնշումները հասել են իրանց գագաթնակետին։ Տանել այլևս անկարելի է։

Մենք՝ տաճկաստանցի գաղթականներս, խնդրում, աղաչում ենք մեր վաղեմի Հայրիկից լսել Տաճկաստանից մեզ հասնող լաց ու կոծին։ Մենք խընդրում ենք Վասպուրականի արծվից նորից բաց անել իր թևերը և հին, երիտասարդական ուժով թռչել դեպի բոլոր քրիստոնյա պետությունների ներկայացուցիչները և մարդասիրական օգնություն խնդրել մեր երկունքի մեջ դտնվող հայրենիքին*։

Ֆ. 56, ց. 14, գ. 46, թ. 50։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 11

Վրացահայ հասարակության ներկայացուցիչների խնդրագիրը կաթողիկոսին՝ արևմտահայերին օգնելու համար եվրոպական տերություններին դիմելու մասին

1895 թ.

Ահա մի ամբողջ տարի է, ինչ Տաճկահայաստանի բոլոր անկյուններում նկատվում է մի սարսափելի երևույթ։ Այն հայ ժողովուրդը, որ հազարավոր

* Հետևում է 90 ստորագրություն։

տարիների ընթացքում ծնել, զարգացել, աճել և ապրել է իր մայրենի հողի վրա, ողողել է այդ հողը իր ճակտի քրտինքով և ներկել իր կարմիր արյունով, որ ամփոփել է իր նախնիքների նշխարները այդ հողի վրա, որն տասն և վեց դարերից ի վեր դավանելով քրիստոնեական սուրբ կրոնը, կանգնեցրել է այդ հողի վրա քրիստոնության փառապանծ կոթողներ, ահա այդ ժողովուրդը, այսօր մոռանալով ամբողջն իր բոլոր նվիրական հիշատակներով, թողնում, լքանում է Հայաստանը։ Նա թողնում է իր մայրենի երկիրը ոչ այն պատճառով, որ չէ կամենում հերկել հողը իր ճակտի քրտինքով, որ խույս է տալիս ծանր աշխատանքից, որ հրաժարվում է կատարել իր քաղաքացիական պարտավորությունները դեպի իր իշխանությունը, ոչ, հազար անգամ ոչ։ Նա գլուխն առած փախչում, գաղթում է բարբարոս քուրդ հրոսակների անթիվ ասպատակություններից և ավազակություններից ստիպված, տաճիկ փաշաների և ուրիշ պաշտոնյաների անտանելի կամայականություններից բռնադատված։ Այդ հարստահարությունները այնպիսի ծայրահեղ աստիճանի հասան, որ ի բնե հեզ և խոնարհ հայ ազգի մի մասը, մի բուռն աղքատ լեռնականներ, ստիպված եղան զենքով դիմադրել վարչության կամայականություններին և պաշտպանել իրանց մարդկային իրավունքներն ու ընտանիքի պատիվը։

Հայաստանն իր դարավոր բազմաշարշար պատմական կյանքի ընթացքում, պարսիկներից սկսած մինչև արաբների, թաթարների և մոնղոլների արշավանքները, որքան էլ ասպատակություններ է կրել, որքան էլ այրվել ու ավերվել է, բայց այս տեսակ հալածանքի դեռ չի ենթարկվել։ Այսօրվա հալածանքի բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդը իր մայրենի երկրից։ Նա՝ մի բուռ քրիստոնյա ժողովուրդ, ղո՞ է բերվում այսօր բարբարոսության սեղանի վրա։ Նրան զրկում են զուրքից, կյանքից, պատվից, նրա աչքի առաջ լլկում, բռնաբարում են անմեղ կույսերին, հարսներին, մորթոտում են նորաբողբոջ մանուկներին, այրում, հրկիզում են բնակարանները, ավերում դաշտերը, առևանգում հոտերը, մի խոսքով, ամբողջ Հայաստանը դարձել է մի սպանդանոց, ուր բնիկ քրիստոնյա ժողովուրդը անմռունչ ոչխարների նման փողոտվում է բարբարոս մահմեդականների դանակով։

Եվ այս բոլորը կատարվում է քրիստոնյա ազգերի, քրիստոնեական եկեղեցու պաշտպան հզոր եվրոպական պետությունների աչքի առաջ։ Եվ կատարվում է այն ժամանակ (բախտի դաժան հեգնություն), երբ մեծազոր Ռուսիո հանգուցյալ կայսեր մարդասիրական ջանքերով և մյուս մեծ պետությունների համաձայնությամբ գրվեցավ Բեռլինի դաշնագիրը՝ 61-րդ հոդվածը, որ խոստանում է հայերին բարվոք կյանք և ապահովություն, երբ վերջապես Անգլիան Կրետեի դաշնագրով ստանձնեց քրիստոնյա ազգերի պաշտպանության հոգսը...։

Մեր համեստ կարծիքն է, Վեհափառ Հայրիկ, որ քաղաքակրթված քրիստոնյա Եվրոպան ավելի ուշադիր կլիներ Հայաստանի խղճալի դրության, օգնության ձեռք կմեկներ բազմաշարշար քրիստոնյա ժողովրդին, յուր գրավոր խոստումները իրագործելու եռանդուն միջոցներ ձեռք կառներ, եթե մի ազդու ձայն նրան լսելի աներ այդ թշվառ աշխարհի լացի և ողբի ձայները, պատկերացներ անլուր անիրավությունների և կոտորածների սրտակտուր տեսարանը, բախեր Ռուսիո մեծազոր կայսեր և եվրոպական պետությանց դռները և արդարություն ու կարեկցություն հայցեր Հայաստանի ընդունակ, աշխատասեր, բայց թշվառ ժողովրդի համար։

Այս մեծ ու փառավոր գործը Ձեզ է վիճակված անել, Վեհափառ Հայրիկ, որ գլուխ եք Հայաստանյաց եկեղեցու և հովվապետ ժողովրդի։

Բոլոր հայոց հետ մենք ևս մեր հայացքն ու ձայնը դեպի Ձեզ ենք ուղղում և Ձեզանից ակնկալում ուղղություն մեր թշվառ տաճկահայ հայրենակիցների անտանելի վիճակին*։

Ֆ. 56, ց. 14, գ. 48, թ. 51—52։ Բնագիր։ Ձեռագիր։

* Հետևում է 85 ստորագրություն։

Прошение католикоса русскому императору об оказании помощи армянскому населению, проживающему в Турции

29 июня 1896 г
Эчмиадзин

Убитый горем вследствие полученных мною достоверных сведений о беспримерной резне и опустошении, произведенных в первых числах сего месяца в городе Ване и окрестностях, единственном районе в малоазиатских провинциях Турецкой империи, где армянское население не подвергалось жестокому гонению, воздвигнутому на турецкоподданную паству мою в течение последних двух лет, взываю к беспредельному милосердию Вашего императорского величества, как исконного покровителя и защитника страждущих христиан на Востоке.

Повергаю к престолу В[ашего] И[мператорского] В[еличества] слезную мольбу мою о защите, да будет сочтена испитой несчастною паствою моей в Оттоманской империи чаша страданий; да распространятся щедрые милости В. В. и на гибнущих братьев верноподданных В. В. армян, которые наслаждаются всеми благами мирной трудовой жизни под сенью отеческого правительства В. И. В.

Благочестивейший государь! О помощи взываю я, чьи последние дни омрачаются тяжким горем при виде поголовного истребления части моей паствы. Вместе со мною взоры всего армянского народа ныне обращены на могущественного государя христолюбивой России, от коего единственно и ждет армянское население Турции исцеления жестоких ран своих.

Мне же, истерзанному страданиями старику, остается лишь возносить пламенные молитвы к царю царей о даровании В. И. В. здравия и благоденствия на многие лета на славу и могущество великой России.

Мкртич Католикос всех армян

Ф. 56, оп. 17, д. 59, л. 48. Отпуск. Рукопись.

№ 13

Վասպուրականի պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետի նամակը կաթողիկոսին՝ Վասպուրականի հայության կոտորածի մասին

2 հուլիսի 1896 թ.,
Վան

Վեհափառ հա՛յր,

Անշուշտ մինչև ցարդ տեղեկացած եք Վասպուրականի կոտորածի մասին և այն անհուն և անլուր աղետներու մասին, որք մեր վրա հասան նախորդ հունիս ամսույն և ավերեցին, քանդեցին, հրկիզեցին քաղաք և գյուղ, դավառ և ավան և Վասպուրականը վերածեցին մոխրակույտի։

Հաջորդին թողլով կոտորածի և այլն աղետներու ընդարձակ տեղեկագիր և վիճակագույցը, որք պատրաստվելու վրա լինելով Ա մասն կը ղրկունք ընդ փույթ, աղետի սաստկության վրա գաղափար մը տալու համար։ Կը հավելում միայն, որ Վասպուրականի կոտորածն սաստկագույն եղած է մյուս բոլոր հայաբնակ նահանգներու կոտորածեն և յուր տեսակին մեջը անօրինակ։ Կոտորածն սկսեցավ հունիսի 3-ին (երկուշաբթի)՝ օրվան ժամը 4-ին և նույն օրն անարգել հառաջ երթալով, հաջորդ օրն միայն (երեքշաբթի) հունիս 4 հայոց կողմեն անձնապաշտպան ընդդիմության բաղխեցավ։ Անձնապաշտպանությունն հաջող կերպով հետս մղեց թյուրք և քյուրդ խուժանի անընդհատ հարձակումները, մինչև որ կառավարությունն յուր զինվորներով և

թնդանոթներով պաշտոնապես միջամտեց հունիս 8-ին (շաբաթ) օրն և վերջ տվավ անձնապաշտպանության։ Հունիս 9, կյուրակե օրն խուժանն կրկին ստավ հայոց թաղերը և անարգել կոտորեց, այրեց, կողոպտեց մինչև հունիս 10-ի երեկոյան ժամը 10-ին, երբ ժողովրդյան մեջը ծանուցվեցավ վեհ. սուլթանի բարձր իրատն խաղաղությունը վերահաստատելու համար և պաշտոնապես վերջ դրվեցավ կոտորածին, ավարառության և հրկիզության։

Կոտորածն ասենասաստիկ կերպով տեղի ունեցավ մանավանդ գյուղերու և գավառներու մեջը։ Բուռն կոտորածի հետ միացած ամենաբուռն ավարառություն և հրկիզություն, ավերեցին և քանդեցին բովանդակ հայ գյուղերը, ամենատեսիլեն սկսյալ մինչ առաջինն։ Բեև գյուղերու և գավառներու մեջ ալ ուրեք-ուրեք անձնապաշտպանության փորձեր տեղի ունեցան, սակայն ասոնք չկրցան ընդերկար տևել և վերջ ի վերջո տեղի ավին մոլեռանդ խուժանի ավելի բորբոքյալ գրգիռներուն ազդեցության։

Հառաջիկային հետևեալ գրվելիք տեղեկագիրներուն և վիճակագրություններուն թողլով իրաց աշմարիտ պատկերյան իրական սպարագիրը, վասն զի թվանշաններն միշտ ասենատաջող գրիչներս ավելի պերճախոս են, կը հաղորդենք, թե որչափ որ ցարդ ստացյալ տեղեկություն չի կրցած առնել գյուղերու և գավառներու կոտորածի և ավերմաց թվույն վրա, բաս մը, որ թերևս տակավին 1—2 ամսո կը կարոտի, այնուամենայնիվ, կոտորածի թիվ առնվազն 15—20000-ն պակաս չէ։ Շատ մը գյուղեր և թաղեր կոչնչացուցին իրենց արու բնակչաց 9/10-ը, որպես Արջակ, Նահպազի, Նարեկ և այլն, շատ մը գյուղեր և քաղաքին Հայկավանքի թաղը։ Մնացյալ բնակիչներն, որք ազատված են, օրերով պահված են լեռներու, խոռոչներու, խոտերու, լիսերու, ճահիճներու, եղեգոցներու մինչև իսկ կոյանոցներու և աղբանոցներու մեջը, շատերը օրերով մնացած են աղբյուրի հորերու, ականներու և այլ ստորերկրյա նկուղներու մեջը։ Ուրիշներ նավերու մեջը ապաստանած և ծովու վրա բացերը ելած են, որպես ավնցիք, թիմարցիք և այլն ծովեզերյա գավառներու բնակիչք. իսկ քաղաքացիք ապաստանած են օտար հյուպատոսարաններու դարպասեն ներքև և այնու ազատված։

Բոլոր գյուղեր և քաղաք անխտիր կերպով ավարի դրված են, վասն զի թե գյուղի և թե քաղաքի տուներս օրերով թափուր մնալով բնակիչներե, ասպաշտպան և բաց մնացած են խուժանի առաջը։ Բազմաթիվ գյուղեր մինչ օրս իսկ թափուր են։ Ազատված են միայն Քաղաքամեջի և Այդեստանի քանի մը կեդրոնական թաղերն, այսինքն, հազիվ քաղաքի 1/3-րդ մասն։ Ադոցմե ի զատ հայք այսօր ոևէ ստացված չունին Վասպուրականի մեջը։

Անգութ ձեռքն չի խնայած նաև տուներու։ Գյուղերու և գավառներու մնչը բազմաթիվ տուներ հրկիզելե հետո չեն խնայած նույնիսկ քաղաքի ամենագեղեցիկ շենքերուն։ Այրած են բոլոր երկհարկանի և աչքի զարնվ[illegible] տունները, որոնց թիվն հինգհարյուրեն կ'անցնի։

Սրբապիղծ ձեռքեր մուտ գտան նույնիսկ մեր վանորեից և եկեղեցյաց մեջը և երկնցան մեր ամենանվիրական սրբություններու վրա։ Վառվեցան Վարագի սբ. Խաչի, Կարմրավորի սբ. Գրիգորի և այլն շատ մը վանքերեց այն մասերն՝ դպրոց, հյուրանոց, մառան և այլն, որք հրկիզելի էին, խուչկալներն, պատկերներն և այլն շարժական սրբություններն կործանվեցան, փշրվեցան, այրվեցան, իսկ արժեքավորներն՝ սկի, լաչ, եկեղեցական զգեստ և այլն կողոպտվեցան։ Այրվեցան նաև հնօրյա ձեռագրարաններն և եկեղեցական գիրքեր։ Վանորեից հնօրյա քարաշեն [illegible]ներն և [illegible]ներ միայն կանգուն մնացած են, կարծես ականատես [illegible] լինելու համար իրենց շուրջը կատարված անթիվ նախճիրներուն և անօրեն սրբապղծությանց։ Քաղաքի եկեղեցիներն ալ վառվեցան՝ Հայնկույսանքի, սբ. Հակոբի, Հայկավանքի եկեղեցիներն, Ավետ գելի եկեղեցին և անոնց դպրոցներն։ Մյուս գյուղերու եկեղեցիներն ալ զրեթե ամբողջությամբ հրկիզված են։

Կրոնի պաշտոնյայք մանավանդ ամենեն ավելի նշավակ եղան կույր խուժանի մոլեռանդության։ Նահանգիս կուսակալության հայ օգնականի դռան առաջը զարնելով սպանեցին Վարագա վանահայր և մեր գերապատիվ ընկեր

Դանիել վարդապետը, որո դիակն ալ շներ կրծեցին, հազիվ փոքր անճանաչելի մաս մը կարող եղանք թաղել։ Նույնպես սպաննվեցան Վարագա միաբաններեն ն[որին] Արիստակես և Հարություն վարդապետներն։ Քաղաքի քահանաներեն սպաննվեցան ս[ուրբ] Հակոբի, Հայկավանքի, ավանցի վեց քահանաներն։ Իսկ գյուղերու քահանաներն և հեռավոր վանորեից վանահայրներն անխտիր կերպով սպանված են։

Իսկ կրոնափոխությանց թիվ և սահման չկա։ Անոնք, որք հունիս 10-են հետո կարող եղած են իրենց գյուղերը վերադառնալ, մեծ մասամբ պարտադրված են բռնի կերպով մահմեդականություն ընդունել։ Շատ մը գյուղերու մեջը դրված են տաճիկ մոլլաներ և շեյխեր, որք կը հավաքեն վերադարձող գյուղացիները մահմեդական կրոնը ընդունելու, հակառակ պարագային մահ սպառնալով։ Քանի մը գյուղեր և նույնիսկ քաղաքացիներ կոտորածն սկսած ժամանակը մահմեդականություն ընդունեցին և ազատ մնացին կոտորածեն։ Կրոնափոխ անձանց թիվն կը հասնի իբր 30 հազար հոգվո։ Յիշոնանք ըսել, որ որպես կրոնափոխներու, նույնպես սպաննվածներու և վիրավորվածներու մեջը կան նաև բավական թիվով կիներ, աղջիկներ և մանուկներ։ Դրեթե բոլոր գեղեցկագեմ գյուղացի աղջիկներ, հարսներ և կիներ առևանգված են և ավելի մեծ թիվով՝ բռնաբարված։

Հունիս 10-են հետո խաղաղություն հաստատված և կոտորածն պաշտոնապես դադրած լինելով, գյուղացիսերն՝ մեծագույն մասամբ որբեր և այրիներ, որք քաղաքս գաղթելու հաջողած էին, այժմ կը բռնագատվին իրենց գյուղերը վերադառնալու։ Եվ ապրուստի միջոց չը տրվիր իրենց բացի ճամփու համար մեկ հատ հացեն։ Անոնցմե ալ, մերթ ընդ մերթ ճամփաներու վրա կսպանվին և գյուղը հասնողներն ալ, եթե մահմեդականություն չընդունին, անշուշտ, անոթի պիտի մեռնին։ Հայոց ձեռքը գտնված բոլոր ամբարներն մահմեդականաց ձեռքն անցած են, որք մեկ հատ ցորյան չեն տար հայոց, նույնիսկ դրամով։ Այժմ ժողովուրդն կապրի միայն խոտերով և հասկերով, որք հասուննալու վրա են։

Ահա այս է վիճակնիս։ Կողոպտված, թշվառացած, որբացած, այրիացած ժողովուրդը պարտավորված է փակվել տուներու մեջը, զի դուրսը երեվելու վստահություն չունի։ Նուվաներն ալ կողոպտված են մեծ մասամբ։ Սուրեն և կրոնափոխությենեն ազատված մյուս ժողովուրդն ալ կսպառե անոթությունն և համաճարակն, որք արդեն բազմաթիվ զոհեր սկսած են տանիլ...

Վարագա վանուց մեջը արժ[անապատիվ] Վրթանես վարդապետեն ի զատ ուրիշ վարդապետ մնացած չէ։ Դեպքեն ի վեր ալ միաբանությենեն և աշակերտներեն տակավին ողջ մնացողներն ալ ցրված են, վանքին մեջը ոչ գույք և անասուն մնացած չէ։ Բարեհաճեցեք Կտուց Անապատի միաբաններեն արժ[անապատիվ] Ստեփան վարդապետ վանահայր նշանակելու հրամայել անմիջապես, որ տեղս գտնված եկեղեցականաց մեջը ամենեն կարողն է, որպեսզի շուտով գործի գլուխը անցնի և աշխատի հավաքել ցրվյալ միաբանությունը։ Հիշյալ արժ[անապատիվ] վարդապետեն կոտորածեն առաջը Բալու առաջնորդական տեղապահ ընտրված լինելով, որչափ որ յուր պաշտոնավայրը մեկնելու պատրաստված էր, սակայն գեր[ապատիվ] Դանիել վարդապետի և այլոց մահվամբ մանավանդ Վարագի համար արժանավոր վանահոր մը պետքեն առաջը, խնդրեցի ամեն[այն] սուրբ պատրիարք հորմեն, որ այլևս Բալու չդրկվի արժ[անապատիվ] Ստեփան վարդապետն, որո պետք ունի թե Վարագի վանքն և թե նահանգս։

Վանահոր անվանման հետ միասին պետք կա նաև նյութական կարևոր օգնության մը վանքի կարևոր մասերու անմիջական վերաշինության, քանի մը անհրաժեշտ երկրագործական անասուններու գնման և հառաջիկա հնձոց արդյունքը վերցնելու համար։ Կը հուսամք, որ Ձեր վեհափառությունն, որ այնչափ գուրգուրացող է և պաշտող Վարագա վանուց, պետք եղած միջոցներն ալ շուտով կը տնօրինե, որպեսզի ըստ կարի շուտով բարձրագլուխ վեր ելնե յուր աճյուններեն և իսպառ ավերակաց կույտ մը չը դառնա։

Կը մնամ ամենախոնարհ համբույրով սրբո աջույդ օծելո, պատրիարքական փոխանորդ Վասպուրականի Սահակ վարդապետ։

Հ. Գ. Հայնկույսնյերու եկեղեցիէն սկսյալ մինչ պզտիկ Քենդրջին [ուր կը գտնվի ռուսական հյուպատոսարանն] գրեթե բոլոր հայ բնակությունները հրկիզված լինելով, այրված է նաև Խրիմյանց տունն և օրիորդաց վարժարանն։ Հայրիկի պատմական սենյակն այսօր մոխրակույտ մըն է, միայն տան դուռն և հարակից միահարկանի շենքերը չեն վառված, իսկ գերդաստանի բոլոր անդամներն ալ անվնաս են։

ՆՈՒՅՆ

Ֆ. 56, ց. 16, գ. 184, թ. 55—57։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 14

Ռուսաստանի հայ ուսանողության դիմումը կաթողիկոսին՝ արևմտահայերին օգնելու նպատակով մեծ տերություններին դիմելու խնդրանքով

Վեհափառ տե՛ր,

[1896 թ.]

Ռուսահայերը չեն կարող անտարբեր հանդիսատես լինել այն սոսկալի բարբարոսություններին, որ վերջին ամիսներս կատարվում են Տաճկաստանում։ Լռել այսպիսի ժամանակ, կնշանակի գործակից լինել դահիճ տաճիկներին և վայրագ քյուրդերին։ Մեր սասունցի և մշեցի եղբայրների արյունը բարձրակոչ բողոքում է մեր դեմ և մենք՝ Մոսկվայի, Խարկովի և Օդեսայի հայ ուսանողներս արդեն լսում ենք մեր խղճի խուլ շունչը՝ «Կայեն, ո՞ւր է եղբայրդ։ Ո՞ւր են Սասնո լեռների արծիվները և Մշո դաշտերի խալալ աշակները, ո՞ւր են չեն գյուղերը և հասկառատ արտերը։ Սակայն անզոր է հայ ուսանողությունը։ Մեր ցանկությունները ավելի մեծ են քան մեր ույժերը և այս թշվառության օրերում մեր, ինչպես և բոլոր հայերի աչքերը բնականաբար դառնում են դեպի Ձեզ, վեհափառ տեր։

Ձեր բարձր դիրքը ոչ միայն դնում է Ձերդ վեհափառության վրա ավելի ծանր պարտականություն, քան որևէ ուրիշ հայի վրա, այլև տալիս է Ձեզ մի բացառիկ ույժ։ Դուք միայն իրավունք ունեք հայտնել կայսրին այն զգացմունքները, որ ազդում են նորին մեծության հայ հպատակներին իրանց եղբայրակիցների կրած անասելի տառապանքները։ Վերջապես, Դուք միայն, վեհափառ տեր, կարող եք դիմել ռուսաց կայսրին և Բեռլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետությունների մյուս ներկայացուցիչներին իբրև հոգևոր պետ մի ամբողջ քրիստոնյա ազգի, որ դարերի ընթացքում պատնեշ կանգնած վայրենի ցեղերի անընդհատ արշավանքների ահռելի ալիքների առաջ, պաշտպանել է սիրո և եղբայրության կրոնը անօրենների դեմ, քաղաքակրթությունը բարբարոսության դեմ։

Պետք է հիշեցնել մեծ պետություններին իրանց խոստումները, այն խոստումները, որոնք հույսեր ներշնչելով հայերին ավելի ես կասկածելի դարձրին նրանց տաճիկների աչքում և ավելի ատելի քյուրդերի համար։ Պետք է դարձնել քրիստոնյա Եվրոպայի աչքերը փոքր Ասիայի այն անկյունի վրա, ուր «մանկանց դիակներ կը ճոճին նիզակների վրա և կանանց աղիքներ սրերի ծայրին», ուր կույսը նզովում է յուր անմեղությունը և հարսը յուր գեղեցկությունը, ուր ամեն մի հայուհի, նոր Այծեմնիկ հանդիսանալով, մանուկն ի գիրկ նետվում է անդունդը՝ կյանքը ղոհ բերելով յուր խղճին և ազատ-վին...

Դրությունը բացառիկ է, վեհափառ տեր, և հուսահատական։ Հայաստանը քանդում են։ Ուզում են ջնջել հայի անունը աշխարհիս երեսից։ Օրհասական րոպեներում պետք է դիմել արտակարգ, արտասովոր միջոցների։ Հիշեցեք, վեհափառ տեր, Ավետարանի վեհ խոսքերը, քաջ հովվի մասին, հիշեցեք հայ նախկին հայրապետներին, հիշեցեք անձնվեր Սահակ կաթողիկոսին, որ ըստ ավանդության, նույնիսկ մեռնելուց հետո դագաղից մեկնում է ձեռքը և տալիս Արաբացոց զորապետին այն դրավոր խնդիրքը, որի մեջ նա բարեխոսում էր յուր նեղված ազգի համար*։

Ֆ. 56, ց. 17, գ. 59, թ. 60—62։ Բնագիր։ Ձեռագիր։

* Հետևում է 85 ստորագրություն։